



Սր. Ստեփանոս Շաբաթօրեայ Հայ Դպրոց

« Հոգեւոր Կեանքի Վերանորոգման Տարի »



Էջմիածին՝ Կառուցուած 303 Թուին

ՏԱՐԵԳԻՐՔ
2025-2026

Հայաստանի Հանրապետության

Օրհներգը

Մեր Հայրենիք ազատ անկախ,
Որ ապրել է դարե դար,
Իր որդիքը արդ կանչում է,
Ազատ, անկախ Հայաստան:

Ահա եղբայր քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի:

Խօսք՝ Միքայել Նալբանդեան
Երաժշտություն՝ Բարսեղ Կանաչեան

Նայիր նրան երեք գոյնով,
Նուիրական մեկ նշան,
Թող փողփողի թշնամու դեմ,
Թող միշտ պանծայ Հայաստան:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտո՛ւ մեռնի,
Բայց երանի՜ որ իր ազգի,
Ազատության կը գոհուի:



Արցախի Հանրապետության

Օրհներգը

Ազատ ու անկախ Արցախ,
Քո տուն-ամրոցը կերտեցինք,
Պատմությունը մեր երկրի,
Մեր սուրբ արեամբ մենք սերտեցինք:

Դու բերդ ես անառիկ,
Բարձունք սրբազան, վեհ անուն,
Մասունք Աստուածային,
Քեզնով ենք յաւերժանում:

Խօսք՝ Վարդան Հակոբյանի
Երաժշտ.՝ Արմեն Նասիբյանի

Դու մեր լոյս հայրենիք,
Երկիր, հայրենեաց դուռ սիրոյ,
Ապրիր դու միշտ խաղաղ,
Մեր հին ու նոր Ղարաբաղ:

Քաջերն ենք մենք հայկազուն,
Մոաւ ենք, Քիրս ենք ու Թարթար,
Մեր վանքերով լեռնապահ՝
Անյաղթելի մի բուռ աշխարհ:



Տարեգիրքը պատրաստեց՝

Մայտա Մելքոնեան

Մր. Ստեփանոս Շարաթօրեայ Հայ Դպրոցի Հիմն
Խօսք՝ Մայտա Մելքոնեան
Երաժշտութիւն՝ Մարինէ Մարգարեան



Հայ դպրոց մեր սիրասուն,
Ամբողջ հօգօր շողշողուն.
Հայ լեզուի դու պահապան,
Վառ կանթեղ ես անսասան:

Կեցցես, կեցցես առյաւելո,
Հայկեան օճախ ամբակերտ.
Մնաս փարոս լուսաշող,
Մշակոյթը պանծացնող:

Մնաս փարոս լուսաշող,
Սերունդներ առաջնորդող:

Մր. Ստեփանոս Շարաթօրեայ
Դպրոցի Հիմն.

Հոկտոմբեր 17, 2021





2025-2026 Տարեշրջանը

Արամ Ա. Կաթողիկոս իր Հռչակագրով

2026 - ը Կը Յայտարարէ

«Հոգեւոր Կեանքի Վերանորոգման Տարի»



Մր. Ստեփանոս Շաբաթօրեայ Հայ Դպրոցը յաջողութեամբ բոլորեց իր 89-րդ տարեշրջանը շնորհիւ իր ուսուցիչ-ուսուցչուհիներու տարած անխոնջ աշխատանքին: Ձեր վարձքը կատար սիրելի ուսուցիչներ:

Դպրոցիս 89-րդ տարեշրջանը, 2025-2026, սկսաւ Սեպտեմբեր 6-ին 92 աշակերտներով եւ աւարտին կը հասնի Յունիս 13-ին: Ինչպէս գիտէք, **ԱՄՆի Արեւելեան ափին միակ դպրոցն է, որ ունի Մանկամտութեան Տասներկրորդ դասարան:** Դպրոցի ուսուցչական կազմին կողքին ունինք չորս փոխ-ուսուցչուհիներ, եւ երեք օգնականներ: Ձեր բոլորին վարձքը կատար սիրելիներ:

Դպրոցի դասընթացքը շաբաթը միայն երեք ժամ է: Կը դասաւանդուին Հայերէն, գրականութիւն, հայոց պատմութիւն, հայկական պարն ու երգը: Կ'օգտագործենք արդի դասագիրքեր եւ աշխատանքային տետրակներ: Տարուան ընթացքին յատկապէս կը նշենք Սեպտեմբեր 21՝ Հայաստանի վերանկախացման օրը, Մշակոյթի ամիսը, Ամանորը, Վարդանանցը, Մայիս 28ը ինչպէս նաեւ Մեծ Եղեռնը:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս դպրոցը իր մասնակցութիւնը բերաւ եկեղեցական արարողութիւններուն: Ճրագալոյցի երեկոներուն Սուրբ Գիրքէն ընթերցումներ կատարեցին ընտրուած խումբ մը աշակերտ-աշակերտուհիներ: Մեծ Պահքի շրջանին հսկումի արարողութիւններուն դարձեալ մասնակցեցան զանազան դասարաններէ ընտրուած խումբ մը աշակերտներ:

ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ



Եօթներորդ եւ ութերորդ դասարաններէն վեց աշակերտներ մասնակցեցան Հայ Օգնութեան Միութեան Արեւելեան ԱՄՆի Շրջանային Վարչութեան կազմակերպած շարադրութեան մրցումին: Հետեւեալ աշակերտները արժանացան մրցանակի.- **Եօթներորդ Դասարանէն – ԱՆՂԷՐԷՆ - Նարեկ Տուգինճեան. (3-րորդ մրցանակ): Ութերորդ Դասարանէն- Հայերէն - Ռեմի Հաճար (2-րորդ մրցանակ) եւ Վանա Գոճանեան (3-րորդ մրցանակ) :**

Սրտի մեծ գոհունակութեամբ կ'ըսեմ որ «Շողեր» տարեգիրքի Ա. թիւը լոյս տեսած էր 23 տարիներ առաջ, 2002– 2003 տարեշրջանին:

**Այս տարուան Տասներկրորդ դասարանի մեր շրջանաւարտներն են՝
Նարինէ Մարտիրոս, Գարինա Տալտրմեան, Քրիսթինա
Տիգրամանճեան, Լոռի Գոյումճեան, Ալեքսանտր Պըլըքեան
եւ Յարութ Գըլըճեան:**



Միւրեւի շրջանաւարտներ, կը շնորհաւորեմ ձեզ եւ ձեր ծնողքը, կը մաղթեմ նորանոր յաջողութիւններ եւ իրականացում ձեր բոլոր երազներուն: Մի՛ մոռնաք մեր մայրենի լեզուն, հպարտ եղէք ձեր հայութեամբ, գորավիզ կանգնեցէք հայ դատի իրականացման եւ ապրեցէք այնպէս որ չզոյճաք: Յիշեցէք որ Հայրենիքը վառ յոյսերով եւ կարօտով կը նայի ձեզի. սատարեցէք անոր վերելքին եւ բարօրութեան: Հայ դպրոցը թող ըլլայ ձեր սիրոյ եւ հոգատարութեան առարկան: Յաջողութիւն բոլորիդ:

Չկայ ուժ մը աշխարհի վրայ որ կը ստիպէ մեզի մոռնալու մեր քաղցրահնչիւն լեզուն եւ հայ մնալու կամքը: Ձեռք-ձեռքի տալով ապահովենք մեր ազգի գոյատեւումն ու փրկենք մեր գաւակները այլասերումէ եւ կորուստէ:

Մայտա Մելքոնեան,



Գերապատիւ Հայր Սուրբ,
 Արժանապատիւ Քահանայ Հայրեր
 Յարգարժան Խնամակալ Մարմին,
 Տնօրէնուհի, Ուսուցչական կազմ,
 Սիրելի Ծնողք եւ ներկաներ,



Փոքր տարիքէս յաճախած եմ Սուրբ Ստեփանոս Շարաթօրեայ դպրոց: Ամէն շարք մեծ հաճոյքով կու գայի, որպէսզի ընկեր-ընկերուհիներս տեսնեմ: Շատ լաւ ժամանակներ անցուցած եմ տարիներու ընթացքին, անմոռանալի յիշատակներով: Շատ յուզուած եմ որ այսօր արդէն եկած է ժամը աւարտելու, երբ լաւ կը հասկնամ հայ դպրոցի արժէքն ու կարեւորութիւնը մեր կեանքին մէջ:

Կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել սիրելի տնօրէնուհի՝ Տիկ.Մայտային, բոլոր ուսուցիչ-ուսուցչուհիներուն, որոնք մեծ նուիրումով եւ սիրով մեզի դաստիարակեցին եւ սորվեցուցին մեր հայ լեզուն, հայոց պատմութիւնը մեր երգերն ու պարերը, մեր աննման մշակոյթը, ինչ որ կարեւոր է մեր ազգի գոյատեւման Համար:

Բախտաւոր կը զգամ եւ հպարտ եմ հայ ըլլալուս:

Ցտեսութիւն սիրելի դպրոց:

Յարութ Գըլըճեան





Միրելի Ներկաներ,

Նախ կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել բոլորիդ, որ այսօր, այս կարելոր օրը, հոս էք մեզի հետ : Կ'ուզեմ նաեւ շնորհակալութիւն յայտնել մեր եկեղեցոյ հոգեւոր հայրերուն, Տիկին Մայտային, մեր ուսուցիչներուն, մեր ծնողներուն եւ մեր ամբողջ դպրոցական համայնքին, որոնք մաս կազմեցին մեզ հասցնելու այս պահին: Աւարտական օրը միշտ ժամանակ մըն է մտածելու եւ յիշելու: Ինծի համար անիկա միայն վերջ մը չէ, այլ նաեւ շարունակութիւն մըն է՝ ճամբորդութեան մը, որ շատ կարելոր մաս եղած է իմ կեանքիս:



Ես ինը տարի յաճախեցի Սուրբ Ստեփանոս Հայկական Ամենօրեայ Վարժարան: Երբ աւարտեցի, կը կարծէի թէ իմ հայկական ուսումնա վերջ գտաւ: Բայց մայրս կը հաւատար որ կարելոր է շարունակել սորվիլ եւ կապուած մնալ իմ արմատներուս. այդ պատճառով սկսայ շաբաթօրեայ դպրոց երթալ:

Ես տակաւին կը յիշեմ առաջին օրը: Դպրոց մտայ քիչ մը նեղուած եւ անորոշ զգալով. կը կարծէի, թէ ոչ որ պիտի ճանչնամ դասարանիս մէջ: Բայց հակառակն էր, երբ շուրջս նայեցայ, տեսայ ծանօթ դէմքեր: Անոնք մարդիկ էին, որոնց հետ մեծցած էի եւ շատ յուշեր ունէի՝ առաջին ծննդեան տօներ, Զատկուան խաղեր, լողաւազանի խնձոյքներ եւ ուրիշ ուրախ պահեր որ մեր ծնողները կազմակերպած էին: Այդ պահուն իմ վախս անցաւ եւ ես զգացի մեծ հանգստութիւն որ չէի սպասեր:

Շաբաթօրեայ դպրոցը ոչ միայն զիս կրկին միացուց իմ հին ընկերներուս եւ զօրացուց մեր կապերը, այլ նաեւ օգնեց որ աւելի լաւ սորվիմ հայերէն լեզուն, պատմութիւնը, արուեստը եւ երաժշտութիւնը: Այս փորձառութեան կարելոր մաս մըն էին Միամանթօ Լսարանի դասարանները, որոնք ես շատ սիրեցի: Հայաստանէն եւ սփիւռքէն ուսուցիչներէ սորվիլը այս դասերը դարձուց շատ իմաստալից: Անիկա մեզի տուաւ ուղիղ կապ մը մեր մշակոյթին եւ լեզուին հետ եւ ամէն ինչ դարձուց աւելի իրական եւ կենդանի:

Ամենէն կարելորն այն է, որ այս փորձառութիւնը զօրացուց իմ ինքնութիւնս: Անիկա օգնեց ինծի հասկնալ, թէ ուրկէ կու գամ եւ ինչու կարելոր է պահել այդ կապը: Այս փորձառութիւնը պիտի մնայ ինծի հետ երկար ժամանակ եւ ես շատ շնորհակալ եմ այս բոլորին համար:

Նարինէ Մարտիրոս





Բարի Երեկոյ,

Երբ ես Լիբանանէն Միացեալ Նահանգներ փոխադրուեցայ, իմ կեանքիս մէջ շատ բան փոխուեցաւ: Նոր երկիր, նոր դպրոց, նոր մարդիկ, ամէն ինչ տարբեր էր: Թէեւ այս պարագան սկիզբը ուրախութիւն պատճառեց, բայց նաեւ դժուար էր հեռանալ այն ամենէն, որ ինծի ծանօթ եւ մտերիմ էին:



Բայց այս բոլոր փոփոխութիւններուն մէջ, մէկ բան միշտ շատ կարեւոր մնաց ինծի համար՝ մեր հայ լեզուն, մեր մշակոյթը եւ իմ հայկական ինքնութիւնը: Մուրբ Ստեփանոս Շաբաթօրեայ Հայ Դպրոցը մեծ ազդեցութիւն ունեցաւ իմ վրաս: Ան ինծի օգնեց, որ ես ոչ միայն պահեմ իմ հայերէնը, այլ նաեւ աւելի խոր կապ զգամ իմ արմատներուս հետ:

Հոն ես շարունակեցի հայերէն խօսիլ, կարդալ, գրել, եւ յատկապէս նոր բաներ սորվեցայ մեր պատմութեան, մեր ասանդութիւններու եւ մեր հարուստ մշակոյթին մասին: Այս փորձառութիւնը զիս աւելի հպարտ դարձուց, որ հայ եմ, եւ աւելի սիրել տուաւ իմ ազգս եւ ժառանգութիւնս: Այսօր, ես սրտանց շնորհակալ եմ բոլոր ուսուցիչներուս, որոնք այս ճամբուն ընթացքին ինծի օգնեցին, զիս քաջալերեցին եւ միշտ հաւատացին ինծի:

Խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ Մուրբ Ստեփանոս Շաբաթօրեայ Դպրոցի տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, յատկապէս Տիկին Մայտային, որ մեր բոլորին իսկապէս զգացուց թէ ինչ է հայ ըլլալը եւ հայ ընտանիքը:

Միեւնոյն ատեն կ'ուզեմ յայտնել շնորհակալութիւնս Միամանթօ Լսարանի ուսուցիչներուն: Անոնց համբերութիւնը, սէրը, հոգատարութիւնը եւ նուիրումը շատ մեծ նշանակութիւն ունեցան ինծի համար: Ես երբեք չեմ մոռնար այն ամէնը, որ անոնք ինծի սորվեցուցին:

Մուրբ Ստեփանոս Շաբաթօրեայ Հայ Դպրոցը եղաւ ինծի համար ոչ թէ միայն Վարժարան մը, այլ ընտանիք մը որ հետաքրքրութեամբ կը սպասէինք անհամբեր որ միանանք շաբաթէ շաբաթ: Շնորհակալութիւն:



Գարինա Տալտըմեան



Բարի իրիկուն բուրիդ,

Այսօր շատ յատուկ օր մըն է ինձի համար, որովհետեւ 15 տարիներ այս հայկական դպրոցը յաճախելէ ետք, այսօր հպարտութեամբ կ'աւարտեմ:

Այս դպրոցը տարիներու ընթացքին դարձաւ երկրորդ տուն ինձի համար:

Ան ինձի մօտեցուց իմ հայկական մշակոյթիս, լեզուիս եւ համայնքիս, որուն համար շատ շնորհակալ եմ:



Կ'ուզեմ յատուկ շնորհակալութիւն յայտնել մեր տնօրէնուհի Տիկին Մայտային, իր նուիրումին եւ աջակցութեան համար: Ան մեզի օգնեց ոչ միայն ուսման մէջ, այլ նաեւ որպէս մարդ զարգանալու եւ տիպար անձեր դառնալու: Նաեւ շնորհակալ եմ բոլոր ուսուցիչներուս, որոնք ինձի օգնեցին բոլոր տարիներու ընթացքին:

Յատկապէս կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել մօրս, որ ինձի փոքր տարիքէս սկսեալ կը ստիպէր հոս գալ: Հիմա կը հասկնամ թէ որքան կարեւոր էր ասիկա, եւ շատ շնորհակալ եմ իրեն:

Մինչ կը շարունակենք մեր կեանքի ճամբան, միշտ պիտի յիշեմ մեր հայ դպրոցը եւ այն ամէնը ինչ սորվեցայ հոս: Շնորհակալութիւն:

Ալեքս Պըլըքեան

*Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն,
Ուր կը մտնէ ամէն հայ իբրեւ տանտէր հարազատ,
Կը ստանայ սէր ու սնունդ, սրտի հպարտ ցնծութիւն
Եւ բորեանէն ու բուքէն հոն կը մնայ միշտ ազատ:
Մուշեղ Իշխան*



Սիրելի Ներկաներ,

Այսօր յուզիչ եւ յիշատակելի օր մըն է ինձի համար: Առաջին անգամ երբ մտայ այս դպրոցը մտահոգ էի շրջապատով. սակայն տարիները անցան եւ այսօր հետս կը տանիմ շատ գեղեցիկ յուշեր:



Շատ դիւրին չէր ապրիլ նոր երկրի մէջ եւ նոր շրջապատի մէջ, բայց որովհետեւ կամք ունիմ աշխատելու եւ բնաւ ջանձնուելու, կրցայ դժուարութիւնները յաղթահարել եւ յառաջանալ:

Հիմա նախասիրութիւններս յաջողեցայ մասամբ իրականացնել: Շատ կը սիրեմ հայկական պարերը եւ պարախումբ մը կը ղեկավարեմ, ուր կը սորվեցնեմ հայկական ազգագրական եւ ժողովրդային պարեր, նոյնպէս մաս կը կազմեմ Սայաթ Նովա պարախումբին եւ ՀՄԸՄ-ի պասքէթպոլի խումբին:

Անշուշտ այս բոլորը կը պարտիմ իմ ծնողքիս եւ իրենց կրթութեանը:

Կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել իրենց անսահման սիրոյ եւ նեցուկին ու քաջալերանքին համար:

Նոյնպէս կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել ուսուցիչներուն եւ տնօրէնութեան, որոնք մեզի սորվեցուցին հայերէն լեզուն սիրել եւ կարդալ ու գրել:

Բոլորին կը մաղթեմ յաջողութիւն :

Մնաս բարով սիրելի դպրոց

Լոռի Գոյումճեան





Միրելի Ներկաներ,

Այսօր շատ կարեւոր օր մըն է մեր բոլորին համար: Այսքան տարիներ ամէն Շաբաթ հայկական դպրոց գալէ ետք, հիմա եկած է պահը որ պիտի աւարտենք : Այս դպրոցը մեզի միայն հայերէն չսորվեցուց, այլ ինծի տուաւ կեանքի ընկերներ: Տարիներու ընթացքին , ես միշտ անհամբեր կը սպասէի հայկական դպրոց գալուն: Չեմ հաւատար որ հիմա կ'աւարտեմ: Տակաւին կը յիշեմ մանկապարտեզին մէջ առաջին անգամ կարդալ սորվիլս:



Կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել Տիկին Մայտային, որ ամէն շաբաթ մեզի հնարաւորութիւն տուաւ հոս գալու, շնորհակալութիւն նաեւ բոլոր ուսուցիչներուս՝ որոնք այս տասնըչորս տարիներուն զիս առաջնորդեցին:

Կ'ուզեմ նաեւ շնորհակալութիւն յայտնել ծնողներուս, որոնք ամէն Շաբաթ առաւօտ զիս դպրոց կը բերէին մինչ ես կը մեծնայի: Սուրբ Ստեփանոսի շնորհիւ, ես կրցայ իմ հայկական ինքնութիւնս զօրաւոր պահել, եւ զայն պիտի փոխանցեմ ապագայ սերունդներուն: Թէեւ այսօր կ'աւարտեմ եւ պիտի հեռանամ սիրելի դպրոցէս, ես Սուրբ Ստեփանոս Շաբաթօրեայ դպրոցը յաւիտեան պիտի յիշեմ:
Ցտեսութիւն

Քրիսթինա Տիգրամանճեան



ԺԲ. ԵՆ ԺԱ. Դասարաններ



6/14/2025
Շրջանաւարտներ



ԺԲ.



ԺԱ.



ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Համազգային Հայագիտական Միություն (NAASR)



Այցելություն

Ես Սուրբ Ստեփանոս Շարաթօրեայ դպրոցով այցելեցի ՆԱՍՐ Հայկական կեդրոնը:

Պարոն Մարք Մամիկոնեան մեզ ընդունեց եւ մեզի ներկայացուց այդ հաստատութեան տարած աշխատանքը հայ մշակոյթին համար: Մեզի ցոյց տուին իրենց գեղեցիկ գրադարանները ուր կային շատ լաւ ձեռով շարուած հայկական եւ օտար գիրքեր եւ առարկաներ, որոնք կը ներկայացնեն բազմաթիւ պատմութիւններ հայերու եւ օտար ազգերու գրականութենէն: Այս այցելութիւնը մեզի համար շատ հետաքրքրական էր, քանի որ մենք չէինք տեսած այսպիսի ընդարձակ գիրքերու հաւաքածոներ, որոնք եկած էին զանազան աղբիւրներէ:

ՆԱՍՐ-ի տարած աշխատանքը շատ մեծ տպաւորութիւն ձգեց մեր վրայ: Վերջաւորութեան Պարոն Մամիկոնեանը շնորհակալութիւն յայտնեց մեր այցելութեան համար:

Կասիա Թոգատճեան, Ժ. կարգ



ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Սուրբ Զատիկ

Սուրբ Զատիկը Քրիստոնեաներուն ամենէն կարեւոր տօնն է, որովհետեւ այդ օրն է որ Յիսուս Քրիստոս Յարութիւն առաւ: Յիսուսի չարչարանքն, խաչելութենէն ու մահէն երեք օր ետք, Յիսուս կեանքի վերադարձաւ: Այս հրաշալի տօնը Քրիստոնեական հաւատքի հիմքն է, որովհետեւ անիկա ցոյց կուտայ թէ մահը վերջը չէ, եւ կեանքը կը յաղթէ մահուան: Յիսուս այդ երեք օրուան ընթացքին, դժոխքի բոլոր չար հոգիները մաքրեց ու դրկեց դէպի դրախտ: Այս ձեռով, բարին յաղթեց չարին: Մեր Հայ Առաքելական Եկեղեցին՝ Աւագ շաբթուան ընթացքին, արարողութիւններով կը ներկայացնէ Յիսուսի չարչարանքը, խաչելութիւնը, ու մահը, ապա Սուրբ Զատիկի օրը Յիսուսի Յարութեամբ մենք կը յիշենք որ այս բոլորը մեր փրկութեան համար է: Ամէն ազգ Սուրբ Զատկուան իր յատուկ արանդութիւնները ունի: Հայերու արանդութիւններն են.-

ա- Հաւկթախաղ, Սուրբ Զատկուան օրը,

սոխի կեղեւով ներկուած հաւկիթներով:

բ- Ուրիշ արանդութիւն մըն ալ, Հայկական չեօրէկ պատրաստելն է:

գ- Իսկ ամենէն կարեւորը, Սուրբ Զատկուայն օրը եկեղեցի երթալն ու օրհնութիւն ստանալն է:



Եկեղեցի կ'երթանք, կ'աղօթենք եւ օրհնութիւն կը ստանանք: Այդ ձեռով մենք ոչ միայն կը տօնենք Յիսուսի Յարութիւնը, այլ նաեւ կը նորոգենք մեր Քրիստոնեական հաւատքը եւ կը մօտենանք Աստուծոյ:

Կասիա Թորատճեան, Ճուլիա Քէպաճեան, եւ Տաթև Սարգիսեան

Ժ.Կարգ



Գոհաբանության Օր

Գոհաբանության Օրը Ամերիկեան տօն մըն է, երբ մարդիկ կը հաւաքուին ընտանիքներով եւ շնորհակալութիւն կը յայտնեն Աստուծոյ, իրենց տրուած բոլոր բարիքներուն համար եւ գոհ կը զգան իրենց ունեցածին համար:

Այս տօնը, ամէն տարի կը նշուի Նոյեմբեր ամսուան վերջին հինգշաբթի օրը:

Այդ օրը ընտանիքով եւ բոլոր հարազատներով կը հաւաքուինք եւ ուրախութեամբ միասին կը ճաշենք: Սովորաբար կ'ուտենք հնդկահաւ, գետնախնձոր եւ ուրիշ տարբեր ուտելիքներ: Վերջաւորութեան պատրաստուած համեղ կարկանդակը կը ճաշակենք: Մենք տօնեցինք Գոհաբանության օրը իմ մեծ մամայիս տան մէջ: Մենք կը ճաշենք երեկոյեան, երբ բոլորս պատրաստ ենք եւ նստած սեղանի շուրջ:

Նախ կ'աղօթենք միասին մեր ընտանիքներուն համար, ապա բոլոր անոնց համար որոնք շատ բախտաւոր չեն եղած այդ պատառ մը հացը ունենալու:

Այս է իմաստը Գոհաբանության Օրուան:

Մելինա Փափագեան, Ժ. Կարգ



ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Տեառնընդառաջը Հայ Առաքելական եւ Հայ Կաթողիկէ եկեղեցիներու մէջ մեծ խորհուրդ ունի. մանուկ Յիսուսի ընծայումը տաճարին: Այդ օրը կը նշուի Յիսուսի ծնունդէն 40 օր ետք:

Երկու եկեղեցիներն ալ կը տօնեն տարբեր օրեր, Առաքելական եկեղեցին կը նշէ Փետրուար 14-ին, իսկ Կաթողիկէ եկեղեցին Փետրուար 2-ին:

Տօնին ժողովրդական ասանդութիւնը խարոյկ վառելն է եւ շուրջը տօնակատարութիւնը: Մեզի համար հետքորթական է դիտել կրակի բոցերը, որոնք մինչև երկինք կը հասնին:



Մարք Չաքմաքճեան -10րդ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Ամէն տարի, Ապրիլ 24-ին մենք կը նշենք 1915-ի հայոց Ցեղասպանութիւնը, երբ 1.5 միլիոն հայեր զոհուեցան: Ապրիլ 24, 1915-ին գիշերը թուրքերը լաւ առիթ մը գտան ցեղասպանութիւնը կատարելու համար: Անոնք ցեղասպանութիւնը կատարեցին, որպէսզի իրենց դարերու երազը իրականանայ: Այդ երազը կը կոչուէր Մեծն Թուրանիա: Անոնց նպատակն էր, որ իրենց հողերը հասնին մինչև Զինաստան:

Անոնք 1915ին մասնակցեցան համաշխարհային առաջին պատերազմին, որ նոր սկսած էր, եւ ուրիշ երկիրներ կարողութիւն չունէին Հայաստանին օգնելու:

Հակառակ անոր, 1918-ին, վեց դարեր յետոյ, Հայաստան անկախութիւն ստացաւ: Ցեղասպանութեան յաջորդեց Սփիւռքահայերու գաղթերը: Անոնք սկսան գաղթել Լիբանան, Սուրիա, Ֆրանսա, Միացիալ Նահանգներ եւ ուրիշ տարբեր երկիրներ:



Ասոր համար է, որ հայերը ցրուած են աշխարհի չորս կողմերը եւ աշխատանք կը տանին իրենց պահանջները ներկայացնելու, որպէսզի վերադարձնեն իրենց հողերը եւ հատուցում ստանան իրենց նահատակներուն համար:

Մարք Չաքմաքճեան -10րդ

Անթընի Փափազեան եւ Նշան Պալճեան - 9րդ.


ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Փետրուարեան Ապստամբութիւն

1920 թուականի Դեկտեմբերին, Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնը փոխանցուեցաւ Համայնավարներուն, որովհետեւ չկրցան դիմադրել մէկ կողմէն Թրքական յարձակումին, եւ միւս կողմէն Ռուսական ճնշումներուն: Այն ատեն, մօտաւորապէս 1000 դաշնակցականներ ձերբակալուեցան, եւ շատերը սպանուեցան:

1921 Փետրուար 13-ին, դաշնակցականներու գլխաւորութեամբ, Հայաստան վերաբնակած Սասունցիներ սկսան ապստամբութիւնը: Փետրուար 16-18ին ապստամբները մտան Երեւան: Նախկին վարչապետ Սիմոն Վրացեանի գլխաւորութեամբ, հիմնուեցաւ Հայրենիքի փրկութեան կոմիտէն:




Հայաստանի հանրապետութիւնը 2 դեկտեմբեր 1920-ի համաձայնագիրով, խողաղ պայմաններով պետք էր դառնար խորհրդային, սակայն առաջին իսկ օրերէն սկսան դաժան սպանութիւններ, բանտարկութիւններ, արքոր, թալան ու բռնարարներ: Երկուք ու կէս ամիս տեւած այս բռնարարներուն դէմ ժողովուրդը, ՀՅԴ-ի ղեկավարութեամբ, 18 փետրուար 1921-ին

Ապրիլ 2-ին, խորհրդային բանակը մտաւ Երեւան եւ յաջողեցաւ ճնշել ապստամբութիւնը, որովհետեւ ուժերը հաւասար չէին եւ նորէն հաստատեց խորհրդային կառավարութիւնը: Ապստամբները նահանջեցին Զանգեզուր, ուր Գարեգին Նժդեհը Ռուսերուն տակաւին կը դիմադրէր:

Գարեգին Նժդեհի պայքարին շնորհիւ, Զանգեզուրը մնաց Հայաստանի մէջ: Փետրուարեան ապստամբութեան շնորհիւ, բանտերէն ազատեցան շատ մը մտաւորականներ, ինչպէս Լեւոն Շանթը եւ Նիկոլ Աղբալեանը, որոնք մեծ դեր ունեցան հայութեան գոյատեւումին մէջ:

Այգի Արգումանեան 9-րդ



ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Հայ ԵՆՔ Մենք

Հայ ժողովուրդը հարուստ է իր պատմութեամբ, մշակոյթով եւ լեզուով: Հայերուն թիւը աշխարհի վրայ մօտ 8 միլիոն է, անոր 3 միլիոնը կը բնակի Հայաստանի մէջ, իսկ մնացած հայերը տարածուած են սփիւռքի մէջ: Հայերը ունեցած են չորս թագաւորութիւններ՝ Արտաշէսեան, Արշակունեաց, Բագրատունեաց եւ Կիլիկիոյ:



Հայերը եղած են առաջին քրիստոնէայ պետութիւնը 301 թուականին, իսկ տառերը գտած է Սբ. Մեսրոպ Մաշտոցը 405 թուականին: Հայ տառերու շնորհիւ Հայ ազգը կրցաւ պահել իր ինքնութիւնը եւ չձուլուեցաւ օտար ազգերու հետ:

Հայերը ունին աշխարհառօշակ արուեստագէտներ եւ երաժիշտներ, որոնցմէ կը յիշեմ Կոմիտաս վարդապետը եւ Արամ Խաչատուրեանը:

Հայերը նաեւ նշանաւոր են իրենց ւսանդութիւններով, որոնցմէ ամենահաճելին ինձի համար Վարդավառն է:

Ճիշդ է որ մենք հայերս տարածուած ենք ամբողջ աշխարհի մէջ, մաս մը կը խօսի արեւելահայերէն, մաս մը՝ արեւմտահայերէն, սակայն բոլորը ունին մէկ հայրենիք՝ Հայաստանը, որ հակառակ բոլոր դժուարութիւններուն եւ թշնամիներուն, ան մնաց եւ պիտի մնայ ազատ, հզօր եւ հպարտ հայ ժողովուրդի կամքով եւ ճիգերով:


Վանա Գոճանեան , Ը. Կարգ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Մեր Մշակոյթը

Հայկական մշակոյթը ունի շատ հին ամրագրութիւններ, երկար պատմութիւն եւ քաջութիւն: Հայաստանը ունի շատ հին արմատներ: Մենք հայերս շատ հպարտ ենք մեր դարաւոր պատմութեամբ: Հաւատքը մեր կեանքի մեծ մասն է եւ շատ գեղեցիկ եւ հին եղեցիներ կան Հայաստանի մէջ: Օրինակ՝ Խոր Վիրապը եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիները: Հայերը բազմաթիւ դժուարութիւններ ունեցած են, բայց պահպանած ենք մեր լեզուն, երգերն ու սովորութիւնները:



Մարիա Իլիատիս, Ը. Կարգ

Պգտիկ Արազը

Աղջիկ մը կար, անունը Արազ. Ուներ սեւ աչքեր ու մէկ մեծ երագ: Օր մը մայրիկը հարցուց. Ի՞նչ կ'ուզես ընել:

Արազը պատասխանեց,- Հայ ազգս պաշտպանել:

Մայրիկը ուզեց գիտնալ թէ ինչպէս պիտի պաշտպանէ եւ հարցուց.- արդեօք ի՞նչ պիտի ընես որ այս գաղափարդ իրականանայ:

Արազը ըսաւ,- հայկական երգեր պիտի երգեմ, հայ բանաստեղծութիւններ պիտի արտասանեմ ու հայերէն կարդամ եւ գրեմ: Անշուշտ պիտի պարեմ մեր սիրուն հայկական պարերը:

Բան չկայ որ պիտի չընեմ կամ չփորձեմ,որպէսզի նպատակիս հասնիմ:

Մարին Մերայտարեան, Ը. Կարգ





Մշակոյթ

Հայ մշակոյթը հարուստ ժառանգութիւն մըն է, որ պէտք է փոխանցուի մեզի, յաջորդ սերունդին:

Այսօրուան աշխարհին մէջ, սակայն, պզտիկները շատ երկար ժամանակ կ'անցընեն վիդէո խաղերու վրայ: Այդ նկատի ունենալով՝ մտածեցի, թէ ինչպէս կարելի է այդ ժամերը օգտակար դարձնել իրենց համար: Այդպէս ծնաւ գաղափարս՝ ստեղծել խաղ մը, որ ոչ միայն գուարճալի ըլլայ, այլ նաեւ սորվեցնէ հայ լեզուն, գրականութիւնը, պատմութիւնը եւ մշակոյթը:

Խաղին մէջ դիւրին հարցումները կու տան երեք կէտ, իսկ աւելի դժուար հարցումները՝ հինգ կէտ: Երբ խաղացողը հասնի յիսուն կէտի, կը յաղթէ եւ կ'անցնի յաջորդ մակարդակին: Այդ ձեւով փոքրիկները կը քաջալերուին շարունակելու խաղը՝ նոյն ատեն կը սորվին հայոց լեզուն, մշակոյթը եւ պատմութիւնը: Եթէ լեզուն պահպանուի, ապա կը պահպանուի նաեւ մշակոյթը, ինքնութիւնը եւ պատմութիւնը:

Նման խաղ մը կրնայ փոքր, բայց կարելոր քայլ մը ըլլալ հայ լեզուն եւ մշակոյթը ապագայ սերունդներուն փոխանցելու:

Հրակ Թոգաճեան, Է. Կարգ



Հիանալի Օր Մը

Մի օր մտածեցի զարմացնել իմ երկու լաւ ընկերներուն: Նրանք սկզբում անակնկալ էին մատուցել ինձ, իմ ծննդեան օրուան առթիւ. այնպէս որ մտածեցի ինչու չփոխադարձեմ նրանց: Իմ ընկերների անունները Ատամ եւ Մայքըլ են: Անընդհատ մտածում էի որտեղ եւ ինչ անակնկալ մատուցեմ նրանց, մինչեւ որ մի սքանչելի միտք ծագեց մօտս: Գաղտնի պիտի հրաւիրէի նրանց դաշտկերոյթի: Ես նամակներ ուղարկեցի եւ սպասում էի յաջորդ օրուան:

Անոնք յաջորդ օրը դպրոցից յետոյ եկան այն վայրը, որտեղ նրանց գրած էի նամակիս մէջ: Ես թաքնուեցի մի ծառի ետեւում եւ զարմացրեցի նրանց: Ատամը եւ Մայքըլը շատ ուրախ էին այս անակնկալին համար: Մենք սկսեցինք մեր այս պահը լաւ տրամադրութեամբ, ճաշեցինք համեղ ուտեսները ինչպէս թագաւորներ: Ամենահիանալի օրն էր մեր համար:

Նարեկ Տուքենճեան, Է. Կարգ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Ապրիլ 24, 1915 - Ապրիլ 24, 2026

Հայոց Ցեղասպանության 111- ամեակ

Ապրիլ 24-ը մեծ իմաստ ունի ինձի համար: Այդ օրը մենք կը յիշենք մեր մէկ ու կէս միլիոն նահատակները եւ կը յարգենք իրենց յիշատակը: Հակառակ անոր որ Օսմանեան թուրքերը ուզեցին ջնջել հայ ազգը, բայց այսօր մենք տակաւին հոս ենք եւ ունինք մեր հայրենիքը՝ Հայաստան:





Մենք պէտք է պահպանենք պատմական այս տխուր ճշմարտութիւնը եւ տարածենք աշխարհի մէջ, որպէսզի նման ոճիւններ եւ ցեղասպանութիւններ կրկին չպատահին: Կարելոր է նաեւ որ մենք պահանջենք արդարութիւն

Այս տարի Ապրիլ 24-ին ներկայ գտնուեցայ Մեսէշուսեց Նահանգի նահանգապետարանին մէջ տեղի ունեցող Ցեղասպանութեան ոգեկոչման հանդիսութեան որպէս Հ.Մ.Ը Մ.ի սկաւուտ: Շատ ազդեցիկ օր մըն էր ինձի համար:

Բոլոր հայերը պէտք է միշտ յիշեն եւ փոխանցեն վկայութիւններ եւ պատմութիւններ հայոց ցեղասպանութեան մասին ընտանիքէն ներս, դպրոցներու մէջ եւ օտարներուն ալ:

Մենք կանգ եւ պիտի մնանք:

Փաթրիք Մալվի, Է. Կարգ





Զ. Դասարանի Աշակերտներու

Ապագայի Փափաքները

Ես երբ մեծանամ կ'ուզեմ նկարիչ ըլլալ: Կը սիրեմ նկարչութիւնը: Փոքր տարիքէս սիրած եմ նկարել մարդիկ, բնութիւն եւ շատ ուրիշ տեսարաններ:

Շատ կը սիրեմ կարդալ գիրքեր ու իմ սիրած կերպարները, մանաւանդ շարժապատկերներու կերպարները կը սիրեմ նկարել. այս ամէն ինչը ընելով շատ մեծ հաճոյք կը ստանամ:

Լիւսի Գեորգեան

Մօտ ապագային համակարգիչի ճարտարապետ կը փափաքիմ ըլլալ, որովհետեւ փոքր տարիքէս մինչեւ հիմա կը սիրեմ մանր բաներ շինել: Իմ կարծիքովս շատ հաճելի է այսպիսի գործ մը աշխատիլը: Ասիկա, ինչպէս բոլորին յստակ է, աշխարհի լաւագոյն եւ շահաբեր գործերէն մէկն է:

Ինծի պէս ուրիշ երեխաներ ալ բաւական ժամեր կ'անցընեն համակարգիչին դիմաց, ըլլալ խաղի կամ դասի համար: Հիւանդանոցներն ու գրասենեակներն ալ միշտ համակարգիչ կը գործածեն: Հիմա ամէն ինչ համակարգիչով է

Միլանա Տալտրմեան

Իմ երագս է որ երբ մեծնամ երկրաբան ըլլամ: Երկրաբանը միայն քարերու մասին չ'ուսանիր, այլ նաեւ մոլորակի եւ անոր վրայ գտնուող բազմաթիւ շերտերուն մասին:

Անոնք կը գործածեն տարբեր ձեւեր տարածքները քարտէսագրելու համար:

Ես կը սիրեմ քարերու մասին կարդալ, թէ ինչպէս անոնք կը կազմուին տարբեր տարրերէ, տարբեր պայմաններու տակ եւ տաքութեան ու ճնշումի պատճառով:

Քարերը հազարաւոր տարիներէ ի վեր կը գործածուին տարբեր նպատակներու եւ միշտ ալ օգտակար եղած են մարդոց առօրեայ կեանքին մէջ:

Մարո Տաւուտեան

Ապագային կ'ուզեմ ներքին յարդարանքի ձեւաւորող (ծրագրող) ըլլալ (Inteior designer): Կը փափաքիմ, որովհետեւ շատ կը սիրեմ նոր գաղափարներով տուներ զարդարել: Նոյնպէս կրնամ գծել տարբեր ոճով տուներ եւ շէնքեր:

Ժագլին Գազանճեան


Ե. ԴԱՍԱՐԱՆ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Մայիս 28, 1918


Հայաստանի Ա. Հանրապետություն





Խաղալ եւ Սորվիլ





ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ



ՄԱՆԿԱՄՍՈՒՐ ԵՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ



ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ



ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ





Շնորհակալութիւն Սբ.Ստեփանոս Եկեղեցոյ
Կիրակի, Սեպտեմբեր 21, 2025
Խաչվերաց, Անկախութիւն եւ Խնջոյք
Ամէնօրեայ, Շաբաթօրեայ եւ Կիրակնօրեայ
վարժարաններ





Մշակույթ



ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ



Գոհարանություն Օր



ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ



Ամանոր



ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ



Ար. Ստեփանոս Եսաթորեայ Ըայ Դպրոց
St. Stephen's Armenian Saturday School


Տարեկան Անուղական Ծաղկերույթ
Կուլտուրամատակարար Տաղանային
Կիրակի, Մարտ 8, 2026, 1:00 Կ.Ն.
Ար. Ստեփանոս Ելեղեցույ Լեռնաբարձին մէջ

Annual Traditional Luncheon
Cultural Program
Sunday, March 8, 2026, 1:00pm
St. Stephen's Church Hall
Artsakh Street, Watertown, MA 02472

RSVP here by 3/31/25
For tickets Call or text Jilda (617) 943-0740

Adults \$45
Students/Children \$25

#shahaturyanartsakh




ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ



Հսկում եւ ճրագալոյց



Ուտնլուայ



ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ



ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱԼԵ



ԱՅՑԵԼՈՒՆԵՐ



Պրն. Արթուր Վերանեան

Երգի Պահ

Պրն. Ալեքս Աւանդազաւոյ

Պար



ԽՄԲԱՆԿԱՐՆԵՐ



Մանկամուր




Զախեն աջ՝ Սոնա Տերեան, Այլա Մինասեան, Ռաֆայել Ղազարեան, Շադիկ Ապուսեան, Աստրիանա Իսկէնտէրեան եւ Ալէքս Փափազեան:
Ուսուցչուհի՝ Տիկ. Ալին Սարգիսեան:



Մանկապարտէզ

Զախեն աջ՝ Տիլան Մինասեան, Մարիամ Պալճեան, Շանթ Մինասեան, Ամելիա Տիլոյեան:
Ուսուցչուհի՝ Տիկ. Նայիրի Մանճիկեան:
(Նկարէն կը բացակայի Նայիրի Պետրոսեան):

ԽՄԲԱՆԿԱՐՆԵՐ



Ա. Դասարան

Ա. Կարգ - Չախեն աջ՝ Ռեյնա Մահերագիս, Անճելին Խրլոբեան, Ալէք Աբէլեան եւ Արեւիկ Սարգիսեան:
Բ. Կարգ- Չախեն աջ՝ Աքիլիս Չոպանեան, Կարօ Թոմարսի եւ Գոսթա Մահերագիս:

Ուսուցչուհի՝ Տիկ. ԱՆԻ ԳՐԼՐՃԵԱՆ:



Բ. Դասարան

Ա. Կարգ - Չախեն աջ՝ Կարեն Լեպլեպճեան, Հաննա Նարկիզեան, Դալիա Ճէմսըն, Լիաննա Պետրոսեան եւ Արամ Սարգիսեան:
Բ. Կարգ- Չախեն աջ՝ Լէյլա Տիլոյեան, Քրիստափոր Գասապեան, Րիտ Գրէյկ եւ Դուին Արզումանեան:

Ուսուցչուհի՝ Տիկ. ԱՆԻ ԳՐԼՐՃԵԱՆ:

ԽՄԲԱՆԿԱՐՆԵՐ



Գ եւ Դ. Դասարաններ



Ա. Կարգ - Չախէն աջ՝ Ալէքս Միքայէլեան, Աննապէլ Արէլեան, Արիսթոքըլ Չոպանեան, Ռաքէլ Պալեան, Արէն Քարաքաշեան եւ Արիանա Բանդազէլոս:
Բ. Կարգ- Չախէն աջ՝ Ուսուցչուհի՝ Օր. Նարինէ Ապրիմեան, Զաքարիա Իլիատիս, Մելանի Ղազարեանց, Պրանսըն Մանճելիքեան, Սանահին Շուարց, Ալէքս Հէլուաճեան եւ օգնական Ուսուցչուհի՝ Օր.Վարդինէ Քէլէճեան:

Ե. Դասարան

Չախէն աջ՝ Ճէքսըն Ճէյմսըն, Գառնի Գոճանեան, Արէնի Գրէյկ, Անի Քարաքաշեան, Լարա Արոյեան եւ Սոֆի Փափագեան:

Ուսուցչուհի՝ Տիկ.Սիրան Թամաքեան:




ԽՄԲԱՆԿԱՐՆԵՐ



Զ. Դասարան

Ա.Կարգ - Չախեն աջ ժազլին
Գազանճեան, Լեւոն Չոպանեան եւ
Միլանա Տալտրմեան:
Բ.Կարգ - Ուսուցչուհի՝ Մաթիլտ
Տաուտեան, Սարո Տաուտեան, Լուսի
Գեորգեան եւ Քելըն Փափազեան:



Է. Դասարան

Ա. Կարգ – Չախեն աջ՝ Հրակ Թորաճեան,
Յոլեր Սերայտարեան եւ Քամի
Արզումանեան:
Բ.Կարգ – Չախեն աջ՝ Ուսուցչուհի՝ Տիկ.
Երան Մանճիկեան, Նարեկ Տուրէնճեան,
Յովհաննէս Պալճեան եւ ԱԼիք
Իսկէնտերեան:
(Նկարէն կը բացակային Փաթրիք Մալվի
եւ Էվըլին Մանճեղիքեան):

ԽՄԲԱՆԿԱՐՆԵՐ



Ը. Դասարան

Ա. Կարգ – Չախեն աջ՝ Վանա Գոճանեան,
Մարին Սերայտարեան եւ Մարիա Իլիատիս:
Բ. Կարգ – Չախեն աջ՝ Ուսուցչուհի՝ Տիկ.
Էլիզապեթ Աղբալարեան եւ Ռեմի Հաճար:

(Նկարեն կը բացակային՝ Նարեկ Մարտիրոս
եւ Ժան Հայթայեան):



Թ. եւ Ժ. Դասարաններ

Ա. Կարգ – Չախեն աջ Լիաննա Իսկենտերեան,
Կասիա Թոքաճեան, Տաթևիկ Սարգիսեան,
Նայիրի Եագուպեան, Ալինա Պըլըքեան եւ
Այգի Արզումանեան:
Բ. Կարգ - Չախեն աջ՝ Սելինա Փափազեան,
Մարգ Չաքմաքճեան, Կարեն Գըլըճեան,
Անթընի Փափազեան, Նշան Պալճեան եւ
ուսուցիչ՝ Պրն. Սարգիս Գարակեօզեան:

(Նկարեն կը բացակային՝ Ճուլիա Քեպաճեան,
Աւետիս Պել եւ Գաբրիել Պիլպիլեան):

ԽՄԲԱՆԿԱՐՆԵՐ



ԺԱ. Դասարան

Ա. Կարգ - Չախեն աջ՝ Վանեսա Աթաքեան
եւ Մանէ Տուգէնճեան:

Բ. Կարգ - Չախեն աջ՝ Գարինա Գալայճեան,
Լոռի Տաւուտեան, Լիանա Մերայտարեան,
Փաթիլ Մարտիրոս եւ Թիֆընի Արուեստեան:
(Նկարէն կը բացակայի Մայքըլ Պիլպիլեան):



ԺԲ. Դասարան

Ա.Կարգ - Չախեն աջ՝ Նարինէ Մարտիրոս եւ
Գարինա Տալտրմեան:

Բ. Կարգ – Չախեն աջ՝ Յարութ Գըլըճեան,
Ալեքսանտր Պըլըքեան եւ Լոռի Գոյունճեան,
(Նկարէն կը բացակայի Քրիսթինա Տիգրամանճեան):

ԽՄԲԱՆԿԱՐՆԵՐ



Խօսակցութեան Դասարան

Ա. Կարգ – Չախէն աջ՝ Ճէմսըն Ճէքսըն,
Լէյլա Տիլոյեան, Սօֆի Փափազեան եւ
Դալիա Ճէմսըն:

Ուսուցչուհի Տիկ. Ատրիանա Տօնոյեան
Կը բացակայի Ժան Հայթայեան

Երգի պահը



ԽՄԲԱՆԿԱՐՆԵՐ



ԽՆԱՄԱԿԱԼ ՄԱՐՄԵՆ

Գեր. Տ. Հրանդ Ծ. Վարդապետ Թահանեան -
Նախագահ

- Տիկ. Յասմիկ Մարտիրոս - Ատենապետուհի
- Տիկ. Մարի Արապեան - Գանձապահուհի
- Տիկ. Լիզա Մեղրակեան - Քարտուղարուհի
- Տիկ. Հեղինկ Մարկոսեան - Խորհրդակա
- Տիկ. Թամար Պերեճիքեան - Խորհրդակա
- Պրն. Յովսէփ Մէլքէշեան - Խորհրդակա
- Տիկ. ԱՆճելիք Ուրֆալեան - Խորհրդակա



ՇՆՈՂԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԷ

Տիկիներ՝

- Թամարա Թոքաճեան – Ատենապետուհի
- Նայիրի Գոճանեան – Փոխ Ատենապետուհի
- Ճիլտա Պալեան – Գանձապահուհի
- Կարինէ Գազանճեան – Քարտուղարուհի
- Ջեփիւռ Պըրքեան
- Անահիս Սահերագիս
- Շովիկ Մինասեան



Ուսուցչական Կազմ



Ա. Կարգ - Չախէն աջ՝ Օր. Նարինէ Ապրիմեան,
Տիկ. Երան Մանճիկեան, Տիկ. Մայտա
Մելքոնեան (Տնօրէնուհի), Տիկ. Էլիզապէթ
Աղբալարեան եւ Տիկ. Ազատուհի Տուքէնճեան:

Բ. Կարգ - Չախէն աջ՝ Տիկ. Նորմա Դեմիրճեան,
Տիկ. Անի Գըրքճեան, Տիկ. Ատրիանա Տօնյեան,
Պրն. Սարգիս Գարակէօզեան, Տիկ. Նայիրի
Մանճիկեան , Տիկ. ՄԻրան Թամաքեան, Տիկ.
Մաթիլտա Տաուտեան եւ Օր. Վարդինէ
Քէշէճեան:

Նկարէն կը բացակային՝ Տիկ. Ալին
Սարգիսեան եւ Տիկ. Թէնի Հաժար:

ԽՄԲԱՆԿԱՐ



Հայ Մշակութային և Կրթական Կենտրոն
Armenian Cultural and Educational Center
47 Nichols Ave
Watertown, MA 02472